Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 531 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԵՊՀ-Ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ - ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) իրականացվող արդիականացման գործընթացներին: Ծրագրի առաջին փուլն ավարտվելու է 2022 թ. օգոստոսին: Ծրագրի երկրորդ փուլում, որը տևելու է մինչև տարեվերջ, նախատեսվում է լաբորատոր սարքավորումների ձեռքբերում և ներկրում, որոնք նվիրաբերվելու են ԵՊՀ-ին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, կրթություն
6.	Ծրագրի բյուջեն	27 338 700 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Երևանի պետական համալսարան հիմնադրամ (ՀՀ. ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թ. օգոստոսի 1-ից մինչև 2022 թ. դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է - Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում Հայաստանի տարածքում՝ 2022 թ. օգոստոսի 1-ից մինչև 2022 թ. դեկտեմբերի 30-ը՝ 16 436 000 դրամի չափով,

		- Լաբորատոր սարքավորումների ներկրում՝ 2022 թ. օգոստոսի 1-ից 2022 թ. դեկտեմբերի 30-ը՝ 10 902 700 դրամի չափով
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում՝ 16 436 000 դրամ՝ առանց ԱԱՀ - Լաբորատոր սարքավորումների ներկրում արտերկրից՝ 10 902 700 դրամի չափով՝ առանց ԱԱՀ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

26.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ